

Այս տողերէն կը հասկցուի թէ՛ 1215ին, Արաբացիք կը տիրէին Պաղեստինի, նոյն վանքը կը վերաշինուի ի ձեռն Գէորգ քահանայի, որ յիշատակարանս գրուած ժամանակ արդէն վախճանած է. նոյնին եղբորորդին Յովհաննէս ձգնաւոր ստացողը կ'ըլլայ սոյն ճառընտրին, ի պէտս իր որդւոյն Գրիգոր սարկաւազին և նոյն վանքին միաբանաց: Ճառընտրին գրիչն է ուրիշ Յովհաննէս մը, անտարակոյս կրօնաւոր, որ Ս. Յակոբայ վանքին մէջ կ'ընդօրինակէ այս ձեռագիրը և կը յանձնէ ստացողին, իբր «գանձ անկողողպտելի» պահելու համար Բեթղեհէմի ճանապարհին վրայ գտնուած Ս. Աստուածածնի նորակերտ վանքին մէջ: Անյայտ կը մնայ մեզ թէ՛ այս հայկական վերաշինութենէն քանի՞ տարի վերջ կործանուած է նոյն վանքը, և ի՞նչ պարագաներու տակ: Հայ եպիսկոպոս մը, Նիկողայոս Ակիւրմանցի անուամբ, 1483ին, ուխտաւորութեամբ այցելութեան առթիւ, կազմած է ուխտատեղեաց ցուցակ մը «Տնօրինական Ս. Տեղիք Երուսողէմի» խորագրով, որուն մէջ Գաթիգմայի այս ուխտատեղին «և ջրհորն որ աստղն երևի» բառերով միայն կը յիշատակէ, որ է ըսել թէ՛ նոյն թուականին արդէն վերստին քանդուած էր վանքը և միայն կը մնար Մոզերուն կամ աւսդիւն աւանդական ջրհորը. իսկ ԺԵ. դարուն, Բեթղեհէմի ճամբուն վրայ, Ս. Կուսի հանգստեան տեղւոյն կենդանի յիշատակը տակաւին կը մնար, երբ ուղևոր մը՝ Ֆելիքոս Ֆապրի կ'այցելէր նոյն տեղը, և անձամբ կը տեսնէր Հայոց նոյն վանքին փլած պատերուն աւերակները (Bethléem, le Sanctuaire de la Nativité, էջ, 3):

Վանքին Յիւսակուութիւնը ըս Միսարանաց

3. Փարիզի Ազգ. Մատենադարանի հայերէն ձեռագրաց մէջ կայ «ճառոց» կամ «սօսանակ» մը, որուն անգղ. թարգմանութիւնը կատարած է Բրօֆ. Կոնիբեր (Ritual Armenorum, էջ 516-527), սոյն ձեռագիրը, ըստ Հ. Պարոնեանի, Լ-Թ դարու հնութիւն ունի, և կը պարունակէ Սաղիմական տօնակարգը, որ կը կատարուէր Ս. Տեղեաց մէջ. յիշատակարան չունի. Կոնիբերի անո՞ր մասին տուած տեղեկութիւններ խիստ շահեկան են, և կը